

5.3.3 Մարդահամարային կադրերի հրահանգավորում

Մարդահամարի կադրերի հավաքագրումից հետո սկսվեցին նրանց հրահանգավորման (ուսուցման) աշխատանքները: Ըստ Ժամանակացույցի 2015թ. օգոստոս ամսվա ընթացքում անցկացվեցին ԼՂՀ ԱՎԾ շրջանային բաժինների պետերի, և մարդահամարի աշխատանքները համակարգողների (թվով 14 մարդ) հրահանգավորումները՝ ԼՂՀ 2015թ. մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթների և ԼՂՀ 2015թ. մարդահամարն անցկացնելու կազմակերպման պլանները կազմելու կարգին առնչվող հարցերով:

ԼՂՀ 2015թ. մարդահամարի հարցաթերթը լրացնելու (մարդահամարն անցկացնելու) կարգի, մարդահամարի տեղամասի վարիչի ու նրա օգնականի, հրահանգիչ-հսկիչի և հաշվարարի պարտականությունների, ինչպես նաև այլ օժանդակ փաստաթղթերի լրացմանն առնչվող հարցերի վերաբերյալ հրահանգավորումներն անցկացվեցին 2015թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում փուլերով՝ ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության շրջանային բաժնի պետերի և մարդահամարի աշխատանքները համակարգողների, այնուհետև մարդահամարի տեղամասի վարիչների և նրանց օգնականների հետ:

Մարդահամարի տեղամասերի վարիչների և նրանց օգնականների հրահանգավորումներն (ուսուցումը) անցկացվեցին ԼՂՀ ԱՎԾ մարդահամարի վարչության կողմից, հրահանգիչ-հսկիչներինը՝ ԼՂՀ ԱՎԾ շրջանային բաժնի պետերի և մարդահամարի աշխատանքները համակարգողների, իսկ հաշվարարներինը՝ մարդահամարի տեղամասերի վարիչների և նրանց օգնականների կողմից (համապատասխան տեղամասերի հրահանգիչ-հսկիչների մասնակցությամբ):

Ուսուցման գործընթացներն ուղեկցվեցին մարդահամարի հարցաթերթի և մարդահամարային այլ փաստաթղթերի գործնական լրացումներով: